ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ք.Եղեգնաձոր 14 հունիսի 2017թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը, հանձնաժողովի անդամները, ՀԼՄ-ների ներկայացուցիչները,<< Սատար>> ՀԿ-ի ներկայացուցիչները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. <<Սատար>> հասարակական կազմակերպության Եղեգնաձորի մասնաճյուղի կատարած աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանն ինտեգրման, առողջ ապրելակերպի խթանման, հաշմանդամային սպորտի զարգացման, մշակութային կյանքին մասնակցության վերաբերյալ:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018թ. տարեկան ծրագրում ներառելու նպատակով առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ
3. <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթին Վայոց ձորի մարզիկների մասնակցության մասին
4. Ընթացիկ այլ հարցեր

Քննարկեցին՝ <<Սատար>> հասարակական կազմակերպության Եղեգնաձորի մասնաճյուղի համակարգող Ա.Մարգարյանը ներկայացրեց կատարված աշխատանքները և առկա խնդիրները:

Ց.Բաբայանը ներկացրեց հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018թ. տարեկան ծրագրում ներառելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզի առաջարկությունները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Շրջաբերական գրություն ուղարկել մարզի համայնքապետերին <<Սատար>> ՀԿ-ի ցերեկային կենտրոն հաճախող հաշմանդամության ունեցող անձանց ճանապարհային ծախսերը հոգալու և օգնելու համար /համաձայնությամբ/:/կատարող՝ Ց.Բաբայան/
2. Աշխատանքներն տանել <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի մասնակիցներին նախապատրաստելու ուղղությամբ :/ կատարող՝ Ա.Հովհաննիսյան/

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար Ց.Բաբայան

14.06.2017թ.